ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ «ԹԱՎՇՅԱ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Ղազարյան Ի.Ա., Մարգարյան Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
izabella.ghazaryan@ysu.am, asya.margaryan97@mail.ru
Ներկայացման ամս.՝ 01.08.2019
գրախոսման ամս.՝ 11.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Սոցիալական ինքնազգացողության ուսումնասիրությունների կարիքը Հայաստանում վաղուց ի վեր է անհրաժեշտ: Չնայած, որ այս երևույթը մեծամասամբ սոցիոլոգիական հետազոտություններում է հանդիպում, այնուամենայնիվ, այն ունի ոչ պակաս հոգեբանական վերլուծության անհրաժեշտություն: Սույն հոդվածի նպատակն է տեսական վերլուծության ենթարկել սոցիալական ինքնազգացողության երևույթը, այնուհետև ներկայացնել դրա փոփոխության ուսումնասիրությունը 2018թ. ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխության օրինակով: Ուսումնասիրության ընթացքում սոցիալական ինքնազգացողության մակարդակները կապել ենք մարդկանց արժեքային կողմնորոշիչների հետ:

Հանգուցային բառեր՝ *սոցիալական ինքնազգացողություն, արժեքներ, «թավշյա» հեղափոխություն:*

2018թ. Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը սոցիալ-հոգեբանական և սոցիալ-քաղաքական գործընթացների աննախադեպ ընթացքի սկիզբ դրեց: Սակայն, մեր կարծիքով քաղաքական, ազգային-գաղափարախոսական մեկնաբանությունների ներքո անտեսվեցին հեղափոխության հոգեբանական առանձնահատկությունները և հետևանքները, մինչդեռ մինչ այժմ նրա հիմնական կարգախոսն է մարդկանց մտածելակերպի, ազգային հոգեբանության փոփոխությունը: Սույն հոդվածում մենք կներկայացնենք մեր կողմից իրականացրած հետազոտության արդյունքները: Հասարակական տրամադրությունները հասկանալու համար մենք որոշեցինք չափել մեր քաղաքացիների սոցիալական ինքնազգացողության մակարդակը: Այնուհետև մենք կապեցինք այն արժեքային կողմնորոշիչների հետ, քանի որ ենթադրում էինք, որ սոցիալական ինքնազգացողության փոփոխությունները չեն կարող պայմանավորված լինել միայն արտաքին գործոններով (հեղափոխական գործընթացներ), այլ նաև մարդկանց ներքին չափորոշիչներով:

Առաջին հերթին, հարկ ենք համարում անդրադառնալ «սոցիալական ինքնազգացողություն» երևույթի նկարագրությանը: Այն լայնորեն կիրառվում է սոցիոլոգիական հետազոտություններում, սակայն, մեր կարծիքով, գտնվում է հոգեբանության և սոցիոլոգիայի հատման կետում, ինչպես նաև ընդգրկում է այլ գիտահամակարգերի տիրույթները:

Վերջին ժամանակներում մեծ ուշադրություն են դարձնում սոցիալական ինքնազգացողության, սոցիալական տրամադրության և սուբյեկտիվ բարեկեցության ուսումնասիրությունների վրա այն է՝ էմոցիոնալ-ռացիոնալ ռեակցիաները շրջակա միջավայրին և տեղի ունեցող իրադարձություններին, ինչպես նաև սեփական դիրքորոշումը դրանց նկատմամբ: [4]

Մեր տեսական ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ սոցիալական տրամադրությունը և ինքնազգացողությունը ունեն հատման բազում կետեր: Կարծում ենք, որ սոցիալական տրամադրությունը ընդգրկում է հոգեվիճակների, գաղափարների և պրակտիկայի ավելի լայն շրջանակ:

Սոցիալական ինքնազգացողությունը սոցիալական խմբի ներկայացուցիչների կողմից սեփական սոցիալական վիճակի, սոցիալ-տնտեսական, հոգևոր կարիքների բավարարման մակարդակի, շահերի էմոցիոնալ-ռացիոնալ գնահատումն է: Սոցիալական ինքնազգացողությունը արտահայտում է հասարակական գործընթացների, տրամադրությունների ընդհանուր վիճակը (տնտեսական, քաղաքական, գաղափարական, ազգային և այլն): Սոցիալական ինքնազգացողությունը անմիջականորեն դրսևորվում է սոցիալական խմբի ներկայացուցիչների հարաբերություններում՝ մեկ այլ խմբի ներկայացուցիչների հետ, այդ խմբի նկատմամբ նրանց վերաբերմունքով և պատկերացումներով, ինչպես նաև սոցիալական գործընթացում նրանց գործողությունների ինտենսիվությամբ և ուղղությամբ: Սոցիալական ինքնազգացողությունը արտացոլում է հասարակական տրամադրությունների ընդհանուր վիճակը, հուզական գնահատականը, սեփական դիրքորոշումները, հետաքրքրությունները: [4]

Սոցիալական ինքնազգացողության խնդիրը վերաբերում է ոչ միայն հոգեբաններին, այլ նաև սոցիոլոգներին, քաղաքագետներին, բժիշկներին: Հոգեբանության տեսանկյունից սոցիալական ինքնազգացողության ուսումնասիրման առարկա դառնում է սուբյեկտի հուզական- զգացմունքային և կոգնիտիվ դաշտերը, նրա սոցիալական ակտիվությունը: [3]

Օ.Լ. Բարսկայան սոցիալական ինքնազգացողությունը համարում էր «ամենօրյա գիտակցության երևույթ»: Նա կարծում էր, որ սոցիալական ինքնազգացողությունը բարդ, դինամիկ կրթություն է, որտեղ կենտրոնացված ձևով հանդես են գալիս զգացմունքները, տրամադրությունները և մարդկանց վերաբերմունքը: [1]

Սոցիալական ինքնազգացողության ուսումնասիրման համար պետք է հաշվի առնել ոչ միայն հուզական և կոգնիտիվ բաղադրիչները, այլ նաև երրորդը՝ վարքայինը, որի շնորհիվ հասկանալի է դառնում սոցիալ-հոգեբանական գործընթացների ազդեցությունը սոցիալական ինքնազգացողության վրա՝ տարբեր մակարդակներում: Սոցիալական ինքնազգացողության ուսումնասիրման համար օգտագործում են սուբյեկտիվ (սոցիալական կարգավիճակի գնահատում, գոհունակությունը՝ տվյալ խմբի անդամ լինելու համար), և օբյեկտիվ (սոցիալական գործողությունների ցուցանիշների միասնական վերլուծություն) մեթոդներ: Սոցիալական ինքնազգացողության չափումը հասարակության և անհատի զարգացման

յուրաքանչյուր փուլի բնույթի բացահայտումն է: Ըստ Ն. Պ. Մեդվեդևայի, չափել սոցիալական ինքնազգացողությունը, նշանակում է առանձնացնել այդ ամբողջության բաղադրիչները, և այն բաղադրիչները, որոնք այդ պահին գերիշխող են, որոնք ունեն նշանակալի դեր: [4]

Վերը նշված տեսական ուսումնասիրությունները հիմք հանդիսացան մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտության համար: Հետազոտությունն ուղղված է ուսումնասիրելու 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին «Թավշյա» հեղափոխության ազդեցությունը մարդկանց սոցիալական ինքնազգացողության վրա, և ինքնազգացողության փոփոխությունների և մարդկանց արժեքային կողմնորոշիչների միջև առկա կապերը:

Հետազոտությանը մասնակցել են ՀՀ 85 քաղաքացիներ՝ Հայաստանի տարբեր շրջաններից: 18-30 տարեկան՝ 50 մասնակից, 30-50 տարեկան՝ 35 մասնակից: Հետազոտության անցկացման համար օգտագործել ենք հետևյալ երկու մեթոդիկաները. Արժեքային կողմնորոշիչների ուսումնասիրման համար օգտագործել ենք Շ. Շվարցի 10 բազային արժեքների հարցաթերթը:

Սոցիալական ինքնազգացողության ուսումնասիրման համար օգտվելով Ի. Ի. Օսինսկու և Ա. Օ. Ալեքսանդրովնայի հոդվածներից (И.И. Осинский: Социальное самочувствие: понятие, факторы формирования и показатели измерения: Россия.: 2007, А.О. Александровна: «Социальное самочувствие: Измерительний инструментарий, показатели и социальные критерии»), կազմել ենք քառասուն պնդումներից կազմված հարցաթերթ: Այնտեղ նկարագրված են որոշակի պնդումներ, որոնց, մասնակիցը յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար առանձին (2008-2018թթ. հեղափոխությունից անմիջապես հետո, և ներկա ժամանակաշրջան) պետք է պատասխանի օգտվելով 1-5 բալային սանդղակից:

Մեթոդիկան կազմված է պնդումներից, որոնք դուրս են բերում սոցիալական, հոգեբանական գործոնների փոփոխությունները: Ըստ միջին տվյալների, և՛ 18-30 տարեկանների, և՛ 30-50 տարեկանների մոտ գերակշռում են «ինքնուրույնություն» և «ունիվերսալիզմ» արժեքային կողմնորոշիչները: Սա ենթադրում է հասկացում, հանդուրժողականություն, երախտագիտություն, աջակցություն մարդկանց և բնության բարեկեցության համար, ինչպես նաև բնորոշ է մտքերի և գործողությունների ազատությունը, անհատական և ինքնուրույն լինելու անհրաժեշտությունը և փոփոխությունների հանդեպ բաց լինելը:

Թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո և՛ 18-30 տարեկանների, և՛ 30-50 տարեկանների մոտ բավականին բարձրացել է սոցիալական ինքնազգացողությունը սոցիալական և հոգեբանական մակարդակներում: Քանի որ հեղափոխությունը ստեղծել էր ուժեղ հուզական ֆոն, և այդ ազդեցությունը մեծ եղավ երկու խմբերի համար էլ: Ներկա ժամանակաշրջանում 18-30 տարեկանների մոտ պահպանվել է ինքնազգացողության բարձր մակարդակը, իսկ 30-50 տարեկանների մոտ որոշ չափով իջել է: Այս փաստը մենք բացատրում ենք նրանով, որ տվյալ սերնդի ներկայացուցիչների համար սա առաջին լուրջ իշխանափոխությունը չէր և

նախկինում եղած բացասական և հուսահատություն առաջացրած փորձը թույլ չի տալիս կայուն պահել դրական սոցիալական ինքնազգացողությունը:

Մեր կողմից իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքում հայտնաբերվել են կոռելյացիոն կապեր սոցիալական ինքնազգացողության փոփոխությունների և ունիվերսալիզմ, կամեցողություն, անվտանգություն արժեքային կողմնորոշիչների միջև: Այս կոռելյացիոն կապերը կան և՛ հեղափոխությունից անմիջապես հետո տեղի ունեցած փոփոխությունների, և՛ ներկա ժամանակաշրջանի փոփոխությունների հետ: Հետաքրքիր միտում ենք դուրս բերել 30-50 տարեկան մասնակիցների մոտ. բացասական կոռելյացիա իշխանություն արժեքային կողմնորոշիչի հետ, որը ենթադրում է հեղինակության, տոտալ հսկողության և ենթարկության դոմինանտա մարդու գիտակցության մեջ:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունը որոշակի պարզաբանում մտցրեց Հայաստանում «թավշյա» հեղափոխության սոցիալ-հոգեբանական պատկերի և հետևանքների մասին: Մեր արդյունքները, բնականաբար, լիարժեք պատկերը չեն կարող արտացոլել, քանի որ նման հետազոտություններ պետք է իրականացնեն մեծ գիտահետազոտական խմբեր, որտեղ ընդգրկված կլինեն հոգեբաններ, սոցիոլոգներ, քաղաքագետներ և այլն:

Գրականություն

1. **Барская О. Л.** «Общественная психология и общественная идеология»,ãè» М;- 1985
2. **Крупец Я. Н.** «Социальное самочувствие как интегральный показатель адаптированное», М: 2003
3. **Кученкова А.В.** «Социальное самочувствие и субъективное благополучие: соотношение è»понятий и способов измерения»;- Методология и методы социологических исследований,2016г., с.120-126.
4. **Медведева Н.П.** «Социальное самочувствие личности: вопроси содержания, измерения и оценки».; Ростов;- 2010, стр. 137.

ИССЛЕДОВАНИЕ СОЦИАЛЬНОГО САМОЧУВСТВИЯ НА ПРИМЕРЕ «БАРХАТНОЙ» РЕВОЛЮЦИИ

Казарян И.А., Маркарян А.(ЕГУ, Ереван, Армения)

Цель данной статьи – подвергнуть теоретическому и эмпирическому анализу понятие социального самочувствия. Авторы представят исследование изменений социального самочувствия на примере «бархатной революции», произошедшей в Армении в 2018г. Уровни социального самочувствия авторы связали с ценностными ориентациями личности.

Ключевые слова: *социальное самочувствие, ценности, <<бархатная> революция:*

THE STUDY OF SOCIAL WELL-BEING ON THE EXAMPLE OF "VELVET" REVOLUTION

Ghazaryan I. A., Margaryan A. (YSU, Yerevan, Armenia)

The purpose of this article is to subject the concept of social well-being to theoretical and empirical analysis. The authors will present a study of changes in social well-being on the example of the "velvet revolution" that occurred in Armenia in 2018. The authors linked the levels of social well-being with the value orientations of the individual.

Keywords: *social well-being, values, "velvet" revolution.*